ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 103

# ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

ՕՐԱԳԻՐ

ՈՒՐԲԱԹ 1 ՄԱՐՏ 1846

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

[illegible]

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իզմիր 1 Մարտ։

Անցեալ օրուան կը ծանուցանէինք, թէ անցեալ շաբաթ օրը Ռուսիական Լոյդի ընկերութեան շոգենաւով հասաւ քաղաքս Կոստանդնուպօլսէն գալով՝ տեղւոյս նոր կառավարիչ փոխանորդը Սալիհ Վասըֆ Էֆէնտի, որ նաւահանգիստը ժամանելուն քաղաքիս պաշտօնէութեան շնորհաւորութեան թնդանօթները որձակուեցան։ Քաղաքապետին խոհեմ բնաւորութիւնը տեղւոյս հասարակութեանը յայտնի ըլլալով՝ մեծ յոյս ունինք որ իր արթուն հսկողութեամբը՝ ասկէ ետև քաղաքս ապահովութեան վիճակ մը վայելէ, որ ժամանակէ մը հետէ կերպ կերպ անկարգութիւններէն ու անհանգստութենէն ազատ չէր։

Յիշեալ շոգենաւով՝ գաղղիոյ Օսմանեան պետական փոխանորդ Սուլէյման փաշան՝ իր հետևորդներովը քաղաքս հասնելով՝ այն օրը կէսօրէն ետև մեկնեցաւ քաղաքէս նոյն շոգենաւով դէպ 'ի Պէյրութ. ուսկէց ցամաք դինով փաշին իր պաշտօնը վարելու։ Նորին վսեմութեան թէ քաղաքս մտնելուն և թէ մեկնելուն ամրոցական յարգանաց թնդանօթներն արձակուեցան։ Յիշեալ փոխանորդ փաշային հետն էր իր տաճկէն թարգման Իզմիրցի ազնուական Ռեշիտ աղային Հաւումեան, ինչպէս որ նախընթաց թուով ծանուցած էինք։ Կ'ըսուի թէ վսեմ. փաշայս այս ծառայութեանը Խոտլեայի քանի մը գիւղերուն ալ այցելութիւն պիտի ընէ։

— Շնորհ ունինք քաղաքիս գլխաւոր հրամանատար փոխանորդ Մուստաֆա Զարիֆ փաշային այս օրերս ըրած բարեկարգութենէն. վասն զի քաղաքիս չուկաներուն մեծ մասը նեղ փողոցներ ըլլալէն 'ի վեր խել մը խանութպաններ և մրգեղէն վաճառողներ խանութներուն առջևը վաճառելու բաներ դնելով՝ ալ աւելի փողոցները նեղնալով անցնող կարծողներուն բաւական դժուարութիւն կը պատճառէր. ուստի յիշեալ փոխանորդ փաշան յատկապէս ատարի պաշտօնեաներով վերցուց այս անկարգութիւնը, որ ասկէ ետև փողոցներու մէջ վաճառուելու բաներ չի պիտի դրուի։

— Նոյն ամսոյն 17ին կէս գիշերին մօտ երկրաշարժութեան թեթև երեր մը զգացինք։

— 20ին քաղաքիս Իէնի Պազար ըսուած թաղը (որ բոլորն ալ տաճկի տուն է) գիշեր տանէ տուն մը վառեցաւ, որուն մէջ ծեր մարդ մը մեռաւ և բնակիչներէն քանի մը հոգի ալ վիրաւորուեցան։

Թէպէտ Հայրենասէր օրագրոյս նախընթաց թուով՝ Ամենայն Հայոց Վեհ Սրբազան Կաթուղիկոսին Թիֆլիզ հասնելուն լուրը՝ Սրբազանին կողմէն եկած ծանուցիր գիր մը ըսելով ծանուցեր էինք. բայց այս օրերս Ստաւրոպօլէն (որ Կովկասեան լերանց հիւսիսային գին Կովկասիա գաւառին գլխաւոր քաղաքն է) Երևա-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿՂԶԻՈՅՆ ՍԵՒԱՆԱՅ

[illegible]

Յամի Տեառն 1825 [illegible]

[illegible]

[illegible]

Նոյն Նուաստագոյն ծառայ Ձեր [illegible] Տէրէնցի։

#### Հատուած Ա։

Յաղագս Հայկայ և Բելայ։

Բաժանմանն 'ի բաժանման մարդկանց՝ քաջին առաջնոյ բազում խորտակիչ, զերկրագործ [illegible] նախահայրն մեր Հայկ որդի Թորգոմայ, որդւոյ Թիրասայ, որդւոյ Գամերայ, որդւոյ Յաբեթի, որդւոյ Նոյի. յետ քակման հպարտացեալ աշտարակին՝ որ 'ի Բաբելոն, գայ 'ի կողմանս աշխարհի մերոյ, զոր բերեալ անուամբ Հայք անուանէ. ունելով ընդ իւրեան զարս զօրաւորս՝ երեք հարիւր թուով, որք էին որդիք, և որդւոց որդիք նորին Հայկայ, յորոց և մեք. թողեալ զայլ բազմութիւնս ընդոծնաց։ Ա խորհրդեալ ամբարձ գլուխ ընդ դէմ բռնաւորութեան Բէլայ Տիտանեան, զոր բազումք գիտելով [illegible] երկրին անհանգիստ ալտրին։ Իւ այսպէս որպէս [illegible] անուան համբաւով յամենայն աշխարհ, մեռանի յիւրում աշխարհի, զոր յաջորդէ որդի նորա Արմենակ կամ Արամանեակ, և եղբարք նորա, զորս ոչ բաւական

տեղւոյն անուն, բաժանեալ 'ի միմեանց, անկեալ այնպէս անդէնց, զորոյ բազում ուղղութիւնս անո ատ ասէր քերթողահայրն Մովսէս, թէ ասէն երկրորդել ոչ համարիմ հարկ, որպէս և ոչ պատճառէ նիւթ բանիցս. 'ի սոցին մէջէ Գեղամ՝ որդի Ամասիայ, որդւոյ Մայիսայ, որդւոյ Արմենակայ, որդւոյն մերոյն Հայկայ, գոյ զերդմանն արևելից հիւսիսոյ յեզր ծովակի միոյ, շինէ առ ստորոտով լերին ղէն, և յիւր անուն անուանէ Գեղարքունի, (որ ըստ պարսկականին Գեղամայ լեառն լսի, այն զի Գեղ՝ լեառն է 'ի նոցին բարբառ), և զծովն՝ Գեղամայ ծովակ։

#### Հատուած Բ։

Յաղագս ծովակին Գեղամայ։

Այս ծովակ Գեղամայ ունի շրջապատ չորից աւուրց ճանապարհի հետիոտս ընթացողի, անկեալ 'ի մէջ զանազան լերանց պարագիծոց շուրջ զիւրեաւ, յարևելից կուսէ լերինք Գանձակայ, և Արձախու, յարևմտից՝ լերինք Գեղարքունեաց, 'ի հիւսիսոյ՝ լերինք Գուգարաց և Շամշադինոյ, և 'ի հարաւոյ՝ լերինք Վայոց ձորոյ։ 'Ի չորից կողմանց պարագիծ լերանց՝ ջուրք աղբերց անուշից յոլովից գետոցեալք զետեղին 'ի միասին անդուստ 'ի ծովակ այսր, կարկաջելով կամ ըստ ստանկանին կեցչոյլով. թուով քան և մեկ, որոյք են քան զեւ քաղցրանոյ ջուր ծովակին՝ ջուր յարմար յրմպել, և զօրութիւն մարսողական, զորոյ զծարծ առի եւ ինձէն, որ թեթև գտա քան զջուր աղբերն (զոր Արշալոյներ անուանեն ներկայ բնակիչք,) 'ի կղզւոջն իմ գնամ։

